# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 12-Ա

### ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.05.2019Թ. ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Խաշթառակ համայնքի 2019 թվականի տեղական բյուջեում փոփոխություն կատարելու մասին

2. Խաշթառակ համայնքի ավագանու 04.02.2016թ. <<Համայնքի վարչական շենքի 1-ին հարկից վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին 2009թ. թիվ 1 նիստի թիվ 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 3-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 13-Ն

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը այն մասին, որ Խաշթառակ համայնքի փողոցների լուսավորության ցանցի անցկացման ծրագրի իրականացման համար անհատ բարերարների կողմից նվիրաբերվել է 8.012.906 ՀՀ դրամ և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է**

Խաշթառակ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 36-Ն որոշմամբ հաստատված համայնքի տեղական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Խաշթառակ համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի եկամտային բաժնում կատարել 8.012.906 ՀՀ դրամ ավելացում որից՝

ա/ 26-11-00 / Ֆիզիկական անձանց և կազմակերպություններից նվիրատվություններ /տողում ավելացնել 8.012.906 ՀՀ դրամ և թիվը կարդալ 8.012.906 ՀՀ դրամ

2. Խաշթառակ համայնքի 2019թ.բյուջեի վարչական մասի ծախսային բաժնում կատարել 8.012.906 ՀՀ դրամ ավելացում որից՝

ա/ Խաշթառակ համայնքի վարչական բյուջեի 01-01-01 ծախսային մասի 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/՝ հոդվածին ավելացնել 8.012.906 ՀՀ դրամ և թիվը կարդալ 8.012.906 ՀՀ դրամ որն ուղղվելու է ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Խաշթառակ համայնքի լուսավորության ծրագրի 20% համաֆինանսավորման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Խաշթառակ, +37498805839, khashtarak.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 14-Ա

## ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.02.2016Թ. <<ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2009Թ. ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյանը: Նա նշեց, որ վարձակալ՝ Աշոտ Հակոբջանյանը ժամանակին հրաժարվել է վարձակալած տարածքից, բայց գործընթացին ընթացք չի տրվել և հիմա դիմել է, ցանկություն հայտնելով շարունակելու վարձակալելու տարածքը : Հաշվի առնելով այս ամենը և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, համայնքի ավագանին **որոշում է**

1. Խաշթառակ համայնքի ավագանու 04.02.2016 <<Համայնքի վարչական շենքի 1-ին հարկից վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին 2009թ. թիվ 1 նիստի թիվ 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 3-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Համարել վերականգնված Աշոտ Հակոբջանյանի վարձակալության իրավունքը համայնքի վարչական շենքի 1-ին հարկի 11-035-057-001-4 ծածկագրի 34,2 քառ.մ տարածքի նկատմամբ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՎԻՐԱԲՅԱՆ ՎԻԼՅԱՄ

ՔԱՄԱԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ